ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<12> մարտի 2016թ.

N 33-Ա

# ԱՐՄԵՆԱԿ ՌԱԴԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմենակ Ռադիկի Մելքումյանի 2016 թվականի մարտի 9-ի N1901-16 դիմումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմենակ Ռադիկի Մելքումյանին 2016 թվականի մարտի 15-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել «Ճամբարակի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն Արարատ Խեչոյանի վրա:

3. Վերապատրաստման ծախսերի հատուցումը կատարում է հրավիրող կողմը:

4.Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի ապրիլի 8-ին:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ